

Արագածոտնի մարզպետի հանդիպումը Ապարանի տարածաշրջանի համայնքներում

Մայիսի 13-ին մարզպետ Սարգիս Սահակյանը այցելեց Ապարանի տարածաշրջան եւ հանդիպեց բնակչության հետ: Վերջինները մարզպետին ներկայացրին ինչպես իրենց համայնքներում առկա հիմնախնդիրները, այնպես էլ դիմեցին անձնական հարցերով:

Առաջին կանգառը Արայի համայնքում էր: Հանդիպումը կայացավ համայնքապետարանի բակում: Իրենց հուզող հարցերից բնակիչներն առանձնացրին Վարդենուտի ջրամբարի գործարկմամբ պայմանավորված՝ ոռոգման ջրի մատակարարման, խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի հարցերը: Գյուղացիները գոհ էին, որ իրենց մոտ ընթանում են անտառապատման եւ խորքային հորի կառուցման ծրագրերը:

Մարզպետը այցելեց նաեւ Վարդենուտ, Արագած, Ծաղկաշեն եւ Շենավան: Այս համայնքներում եւս բնակիչները հավաքվել էին դրսում եւ հենց այդտեղ էլ դիմավորեցին մարզի ղեկավարին: Նրանց կողմից բարձրացված հարցերը եւս ընդհանրական բնույթ ունեին: Դրանք վերաբերում էին ջրամատակարարմանը, գազիֆիկացմանը, միջհամայնքային ճանապարհների բարեկարգմանը, համայնքների խոշորացմանը, գյուղատնտեսական արտադրանքի մթերմանը, ինչպես նաեւ անձնական մի շարք հարցերի:

Բարձրացված բոլոր խնդիրների վերաբերյալ մարզպետը պարզաբանումներ կատարեց եւ որոշակի նշեց դրանց լուծման ժամանակահատվածն ու ընթացքը: Նա նշեց, որ շարունակվում է կառավարության կողմից համայնքներին տրվող դիզելային վառելիքի, պարարտանյութի հատկացումը, եւ բնակիչները կարող են իրենց պահանջարկին համապատասխան ձեռք բերել դրանք:

Մի խումբ սոցիալապես անապահով ընտանիքների տրվեց դրամական եւ բժշկական աջակցություն, հատկացվեց առողջարանի ուղեգրեր, իսկ բոլոր նորածիններին՝ 48 բալիկի, նվիրվեց մանկական հագուստեղեն պարունակող ծանրոցներ:

Մարզպետի հանդիպումները համայնքների բնակիչների հետ շարունակելի են: